

աղատ և անտաղնապ մտօք արթննաս պիտոր. քու պաշտպան ոգիդ այն ա- տեն իր պարտքը աղէկ կատարած չէր ըլլար. կանխազգաց ազդեցութիւններ չէիր ունենար, և ատարգեք չէր ըլլար որ վրադ հասած դժբաղդութիւնը դար- ձեալ տեղի ունենար:

Դիտէ որ կանխազգացումը երազոյց կարգը կ'անցնի. միայն անոնք կը յի- շուին՝ որ իրապէս կը հանդիպին, բոլոր միւսները կը մոռցուին. թէ որ կան- խազգացմունք իրական բան մը ունե- նային, ամենը առհասարակ պէտք էին կատարուիլ. վասն զի եթէ բնութիւնը ուղենար մեզի դադտնի ազդարարու- թիւններ տալ, ինչո՞ւ համար հետերնիս այլաբանական լեզուով մը պիտոր խօ- սէր: Իր յատկութիւնը՝ ուղղութիւնն ու համարձակութիւնն է. եթէ մեզի մէկ մը միայն ծուռ կանխազգացում մը նշանակէ, բոլոր մնացորդքն՝ կաս- կածելի, վերացեալ ու ցնորական կ'ըլ- լան:

ԱՄԵՐԻԿԱ ԳԱՂԹՈՂ ՁԻՆԱՅԻՔ

Շատ քիչ ծանօթութիւն ունինք թէ ինչպէս կ'ապրին Ամերիկա, և գլխաւո- րապէս Քալիֆորնիա՝ ուր բազմութեամբ կը գտնուին, այն Ձինացիք որ այն եր- կիրը կը դիմեն, որ երբեմն, ինչպէս ա- լետեաց երկիր մը՝ բոլոր աշխարհքիս ազահութեան առարկայ մըն էր:

Քալիֆորնիայի Ձինացիք գրեթէ բո- լորը տղէտ ու աղքատ մարդիկ են: Ի- րենց թիւը 50,000ի չափ կը հասնի, և ութը կամ ինը տարիէ 'ի վեր այն կող- մերը գնացած են. գրեթէ ամենը հան- քերու աշխատաւորք են, ու ոսկւոյն ծարաւէն Ամերիկա գնացած: Ի վերայ այսր ամենայնի կան նաեւ այլք որ ճանչ- նալով թէ ինչպէս կարելի է նաեւ ուրիշ արուեստներով ալ ոսկի շահել, և մա- նաւանդ կոխուած ու պատրաստ առա- լելութեամբ, ինքզինքնին արուեստից ու վաճառականութեան տուած են, կամ

թէ ձկնորսք, խոհակերք, մանչք և ամեն տեսակ ծառայք եղած են:

Քալիֆորնիա գաղթող Ձինացիք, բաց 'ի քանի մը բացառութիւններէ, վեց հատ մեծ ընկերութեանց կը վերա- բերին՝ որ գաղթականութիւնները դի- րենցնելու համար ձևացած են: Ասոնք գաղթականաց դէպ Ամերիկա անցքին ժամանակը՝ անոնց պաշտպանութիւն կ'ընեն, և երբ անժանօթ երկիր մը ցա- մաք կ'ելլեն՝ որ այնչափ հիւրասէր չէ, տեսակ մը կարաւանատան մը մէջ զա- նոնք կ'օթեւանեն, կը կերակրեն, կը դարմանեն՝ երբ հիւանդ են, և վերջա- պէս ամենայն կերպով իրենց օգնական կ'ըլլան:

Անոր համար Ս. Փրանկիսկոսի փո- ղոցներու մէջ ամենեւին Ձինացի մու- րացկաններ չեն տեսնուիր, և ոչ ալ հիւանդանոցներու դուռը այն ազգէն մարդիկ կը ներկայանան. և աղէկ է որ ասանկ ըլլայ, վասն զի Քալիֆորնիացիք՝ նախանձելով այն խոնարհ՝ բայց և ան- խոնջ գործաւորաց վրայ, որոնք իրենց չնչին պահանջներովը արուեստը կ'աւ- րեն՝ այնչափ պատրաստականութիւն չունին անոնց օգնութեան հասնելու:

Ձինացիք ինքնաշարժ և առանձին Քալիֆորնիա չեն գար: Հարուստ մար- դիկներու պարտական կ'ըլլան, որոնք անցքին ծախքը իրենց կը հոգան և առ- ջի կարևոր ծախքերը կը մատակարա- րեն, ու յետոյ անոնց ամսականէն՝ շատ մը տարի չորսէն մինչև ութ տոլլար՝ կը զրաւեն: Այս կերպ պարտապան մնա- ցող Ձինացին հաւատարմութեամբ կը հատուցանէ պարտքը:

Ընդհանրապէս Ձինացիք շատ աշխա- տասէր ու հանդարտաբարոյ են. ա- նոնք որ վաճառականութեան ետեւ են՝ արդար մարդոց համբաւն ունին, այս բա- նըս պէտքին ժամանակը՝ իրենց հայրե- նակիցներէն դրամոյ օգնութիւն ունե- նալը կը դիւրնցնէ:

Ձինացին աշխատութեան ու համբե- րութեան ուժովը կ'ուղէ հարստնալ. ա- նոր համար անյագ չցուցունք ինքզին- քը, ինչպէս Քալիֆորնիա գաղթող ու

րիշ ժողովուրդներ: Փոխանակ հարուստ հանքերու վրայ իյնալու, ինքզինքը ուրիշներու արհամարհած կամ սպառնացած տեղերէն ելու տայ, ուր նաև իր աշխատանաց վարձքը կը գտնէ: Միւս կողմանէ ալ այն նախանձուն պատճառաւ որ ճերմակները զիրենք կ'ատեն թոյլ չտար որ ճոխ հանքերէն օգտուին, և շատ ալ է եթէ իրենց ներկայութիւնը համբերութեամբ կը քաշեն: Իրենց աշխատութեան գործիները հին են, որ ֆալիֆոունիացի հանքագործը կ'արհամարհէ՝ արդի կարողագոյն մեքենաներ ունենալով:

Սուրբ փրանկիսկոս հաստատուած Զինացիք՝ սովորաբար իրեքէ մինչև տասը ոգւոյ ընկերութիւններ կը ձևացնեն. աշխատութիւնը և համարանոցին պահպանութիւնը՝ մէջերնին կը բաժնեն: Վաճառականները մեծաւ մասամբ Զինաստանի մետաքս, բրինձ, չայ և չոր ձուկ կը ծախեն: Իրենց բոլոր կերակուրը ձկն ու բրինձէ կը բաղկանայ: Բրինձը հացի տեղ կը բռնէ. եզան միս, ընդեղէն քիչ կ'ուտեն, և այնչափ ալ չեն ախորժիր:

Կ'երևայ որ Զինացիք մեծ դժուարութիւն կը զգան օտար լեզուներ սորվելու: Այս դժուարութիւնը ու հոն տեղի ժողովրդեան այնչափ ախորժելի չըլլալուն համար է որ առանձին կեանք մը կը վարեն: Անոր համար ալ ինքզինքնին իբր տեղւոյն բնակիչ չեն համարիր, այլ իբր անցաւոր գործաւորք. և ուրիշ ազգաց ալ ոչ հագուստը և ոչ սովորութիւնները իրենց կ'առնուն. ուրիշ բան չեն մտածեր՝ եթէ ոչ իրենց աշխատանաց քրտամբք և խնայութեամբ շահած հարըստութիւնովը օր մը իրենց հայրենիքը դառնալ:

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես էրես 288)

280 Ի՞նչ մագնիսական երևոյթ կը պատճառէ կայծակն: — Նախ, երբոր զարնէ կողմնացուցի մը, անոր բևեռները հակառակ կը դարձնեն, և մագնիսականութիւնը կը ցրուէ կամ կը նուազեցնեն: — Բ. Ճօճանակին շարժումը կ'այլայլէ: — Գ. Մագնիսական զօրութիւն կը հաղորդէ երկաթէ ձողերու: — Դ. Կ'արգելու ելեքտրական հեռագրութեան մէջի գնտակներուն արդիւնքը:

281 Ի՞նչ կերպով կայծակը կը ներգործէ ելեկտրական հեռագրութեան մագնիսական ասեղներուն վրայ: — Ելեկտրական հեղուկը կը պտըտի պղնձէ թելերուն մէջ, որոնք հաղորդակցութիւն ունին հեռագրութեան մագնիսական գնտակներուն հետ, և անոնց ազդեցութիւնը կ'արգելու, կամ նաև բոլորովին կը խափանէ:

282 Ի՞նչ բան է կողմնացոյցը: — Կլոր տուփով՝ ստուարաթուղթէ և կամփայտէ, որուն ճիշտ մէջտեղը հաստատուած է պղծաթի առանցք մը սրածայր, որուն վրայ կը կենայ ամենաթեթև պողովատէ ասեղ մը կամ սլաք մը, որպէս զի նուազ ըլլայ չըփմունքը: Այս սլաքը իր շարժմանը մէջ ազատ ըլլալով միշտ նոյն դիրքի մէջ կենալու յատկութիւն մ'ունի, երբոր պատճառաւ մը ցնցուելու ըլլայ: (Այս յատկութիւնը և ասեղին միշտ նոյն ուղղութեան դառնալը կը կոչուի ասեղին հորիզոնականութիւն):

283 Ի՞նչպէս կը կոչուի այս պողովատէ սլաքը: — Մագնիսական ասեղ կը կոչուի:

284 Ի՞նչ ուղղութիւն կ'առնու մագնիսական ասեղը կողմնացուցի մը մէջ: — Իր ծայրերուն մէկը դէպ'ի հիւսիս՝ մէկայլը դէպ'ի հարաւ կը դարձնեն, որ է ըսել դէպ'ի երկրի բևեռները:

285 Ի՞նչէն կու գայ այս յատկութիւնս պողպատէ սլաքի մը: — Մագնիսականութենէ կամ բնական մագնիսէն:

286 Ի՞նչ բանի կը ծառայեն կողմնացոյցը: — Նաևերը առաջնորդելու. որովհետև ծովուն մէջ՝ ուր սահմանք կամ եղեբք չեն տեսնուիր, գիտնալով որ ասեղին ծայրը միշտ դէպ'ի հիւսիս կը նայի, նաևաստիք կըրնան գիտնալ թէ դէպ'ի որ կողմը պիտի ուղղեն իրենց նաւերը, իբրև թէ